ՕՔՍՖՈՐԴԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲՈԴԼԵՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԸ

ՄՀԵՐ ՊԱՊՅԱՆ

Օքսֆորդի համալսարանի Բոդլեյան գրադարանը Մեծ Բրիտանիայի ամենահարուստ և հնագույն դրադարաններից է: Այն հիմնադրվել է XIII դարում համալսարանի հետ միաժամանակ: Հետագա դարերի ընթացքում, նվիրատվությունների և գնումների ճանապարհով գրադարանը իր ֆոնդերը հարստացրել է աշխարհի տարբեր լեզուներով գրված ձեռագրերով և գիտության բոլոր բնագավառներին վերաբերող տպագիր գրքերով:

Բավական հարուստ է նաև Բոդլեյան գրադարանի հայերեն ձեռագրերի և գրքերի հավաքածուն: Ցուցակներում պահպանված նշումների համաձայն առաջին հայերեն ձեռագիրը գրադարանը ստացել է 1635-ին, արքեպիսկոպոս Լաուդի կողմից: Այնուհետև հայերեն ձեռագրերի հավաքածուն կազմավորվել է դոկտոր Թոմաս Մարշալի, դոկտոր Էդվարդ Փոկոկի և արքեպիսկոպոս Ներսեսիուս Մարշի նվիրատվությունների շնորհիվ: Ըստ 1665-1701թթ. Բոդլեյան գրադարանի գրադարանավար դոկտոր Հայդի ձեռքով կազմված հայերեն ձեռագրերի և տպագիր գրքերի ցուցակի[1], արդեն XVII դարի վերջում Բոդլեյան գրադարանն ուներ 92 հայերեն ձեռագիր և 52 տպագիր գիրք:

1707 թ. Օքսֆորդ է այցելել հայ տպագրության երախտավոր, արդեն 90-ամյա Թովմա արքեպիսկոպոս Վանանդեցին: Այցելության ժամանակ նա Բոդլեյան գրադարանին է նվիրել Ամստերդամում իր հիմնադրած տպարանում տպագրված հայերեն գրքերի օրինակները[2]: XIX դարի վերջին – XX դարի սկզբին բազմաթիվ ձեռագրեր (գնման և նվիրատվությունների ճանապարհով) ձեռք են բերվել հայագետներ Սուքիաս Պարոնյանից և Ֆրեդերիկ Կոնիբերից:

XIX դարի վերջին Բոդլեյան գրադարանում արդեն այնքան հայերեն արժեքավոր ձեռագրեր էին պահվում, որ պահանջ էր առաջացել կազմակերպելու դրանց գիտական ուսումնասիրությունը: Սուքիաս Պարոնյանը ձեռնամուխ է լինում ձեռագրերի նկարագրությանը, սակայն չի հասցնում ավարտել սկսված գործը: Նրա մահից հետո այդ գործը շարունակում է հայտնի հայագետ Ֆրեդերիկ Կոնիբերը, որը և հրատարակում է Բոդլեյան գրադարանի հայերեն ձեռագրերի ձեռագրացուցակը[3]:

---

1 Այս ցուցակն այժմ ընդգրկված է գրադարանի հայերեն ձեռագրերի հավաքածոյի մեջ և պահվում է Ms. Arm. d. 23 համարի տակ:

2 V. N e r s e s s i a n. Catalogue of Early Armenian books 1512-1850. The British Library, London 1980. *Գրքում Օքսֆորդի համալսարանի Բոդլեյան և համալսարանի տարբեր քոլեջների գրադարաններում պահվող հնատիպ հայերեն գրքերին վերաբերող հատվածը գրել է Բոդլեյան գրադարանի հայերեն և վրացերեն գրականության պատասխանատու՝ Դեյվիդ Բարեթը:*

3 Catalogue of the Armenian manuscripts in the Bodleian Library, by the Rev. S. Baronian and F. Conybeare, Oxford, 1918. *1908-1910 թթ. Բոդլեյան գրադարանի հայերեն ձեռագրերի նկարագրությամբ զբաղվել է նաև Էջմիածնից հատուկ այդ նպատակով գործուղված Տիրայր վարդապետ Հովհաննիսյանը, որի աշխատանքը, սակայն, չի հրատարակվել և այժմ ձեռագիր վիճակում պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվում (այսուհետև՝ ՄՄ):*

XX դարի սկզբին հայերեն ձեռագրերի հավաքածուն արդեն բաղկացած էր 124 ձեռագրից, որոնց նկարագրությունները հրատարակվել են Պարոնյան-Կոնիբերի ձեռագրացուցակում: Ձեռագրերի ձեռքբերումը այսօր էլ շարունակում է առաջնահերթ տեղ գրավել Բոդլեյան գարադարանի աշխատանքներում: 1918թ. հետո գրադարանը նվիրատվությունների և գնման եղանակով ձեռք է բերել ևս 13 հայերեն ձեռագիր և մի քանի պատառիկ:

1918թ. հետո Բոդլեյան գրադարանի ձեռագրերը գիտական ուսումնասիրության չեն ենթարկվել: Գիտական շրջանառությունից դուրս են մնացել նաև Պարոնյան-Կոնիբեր ձեռագրացուցակի հրատարակությունից հետո գրադարանի ձեռքբերած 13 հայերեն ձեռագրերը: Օգտվելով 1996-1997 թթ. Օքսֆորդի համալսարանում մեր ուսանելու հանգամանքից՝ փորձեցինք լրացնել այդ բացը:

Մեր ուսումնասիրած ձեռագրերից ամենաարժեքավորներն, անկասկած, Ms. Arm. d. 25 և Ms. Arm. d. 22 համարները կրող ձեռագրերն են: Այս երկու ձեռագրերի նկարազարդումները կարելի է համարել Վասպուրականի դպրոցի լավագույն մանրանկարչական գործերից: Ձեռագրերից առաջինը նկարազարդել է մեծանուն մանրանկարիչ Հակոբ Ջուղայեցին, որի արվեստը և կենսագրությունը բավականաչափ ուսումնասիրվել են[4]: Մինչ այժմ հայտնի էին Հակոբ Ջուղայեցու նկարազարդած 8 ձեռագիր. դրանք են՝ Ավետարաններ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 6758, 9691 (1585թ.), Փարիզ, մասնավոր հավաքածու (1586թ.), Մանչեստր, John Rylands Library, ձեռ. 20 (1587թ.), Երուսաղեմ, ձեռ. 3424 (1592թ.), Նոր Ջուղա, ձեռ. 8 (1607թ.), ՄՄ, ձեռ. 7639 (1610թ.), Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, ՄՄ, ձեռ. 5472[5]: Օքսֆորդի Բոդլեյան գրադարանում պահվող Ms. Arm. d. 25 ձեռագիր Ավետարանը երբևէ չի ուսումնասիրվել արվեստագետների կամ ձեռագրագետների կողմից և դուրս է մնացել գիտական շրջանառությունից: Կարելի է հուսալ, որ այս ձեռագրի հետագա ուսումնասիրությունը նոր լույս կսփռի Հակոբ Ջուղայեցու արվեստի և Վասպուրականի մանրանկարչության վրա ընդհանրապես:

Բոդլեյան գրադարանի Ms. Arm. d. 22 համարը կրող Ավետարանը նույնպես մեծ արժեք և հետաքրքրություն է ներկայացնում: Այս ձեռագիրը նկարազարդվել է Վասպուրականի դպրոցի մեկ այլ նշանավոր ներկայացուցչի՝ Սարգիս Մոկացու (Մաղման) կողմից: Երևանի Մատենադարանում պահվում են Սարգիս Մոկացու նկարազարդած ձեռագրերից 6-ը: Մեր ունեցած տվյալներով Բոդլեյան գրադարանում պահվող ձեռագիրը նույնպես դուրս է մնացել գիտական շրջանառությունից:

Բոդլեյան գրադարանի հայերեն ձեռագրերը հիմնականում գրված են Արևելյան Հայաստանի տարածքում կամ Պարսկաստանում: Ձեռագրերում պահպանված հիշատակարանները բավական նյութ են պարունակում ժամանակի գործիչների, պատմական իրադարձությունների վերաբերյալ: Հիշատակարանների հրատարակումը դալիս է լրացնելու արդեն հրատարակված հայերեն ձեռագրերի հիշատակարանների շարքը:

---

4 Ի. Դրամբյան. Հակոբ Ջուղայեցի.—«Սովետական արվեստ», 1970, N 3. Նույնի՝ Հակոբ Ջուղայեցու մանրանկարների պատկերագրությունը.—«Բանբեր Մատենադարանի», N. 10, 1971: И. Дрампян. Новые материалы по биографии Акопа Джугаеци.—«Լրաբեր հաս. գիտ.», 1969, N 10: Հին հայկական մանրանկարչություն (ալբոմ), կազմ. և առաջաբ. Լ. Դուրնովո. Երևան, 1952. Նույնի՝ Հայկական մանրանկարչություն (ալբոմ) կազմ. և առաջաբ. Լ. Դուրնովո, Երևան, 1967. А. Свирин. Миниатюры древней Армении. М.—Л., 1939.

5 Տե՛ս Ի. Դրամբյան. Հակոբ Ջուղայեցու մանրանկարների պատկերագրությունը, էջ 171:

Ստորև ներկայացնում ենք Օքսֆորդի Բոդլեյան գրադարանում պահվող, 1918թ. հետո ստացված հայերեն ձեռագրերի նկարագրությունը:

Ձեռագիր Ms. Arm.d. 21

ԱՎԵՏԱՐԱՆ

թվական՝ անհայտ

վայր՝ Նախճավան, Սիսիան

գրիչ՝ Արիստակես եպիսկոպոս (հավանաբար նաև ծաղկող, ստացող և պատվիրող)

թերթաքանակ՝ 244

նյութ՝ թուղթ

մեծություն՝ 27x19x5 *սմ.*

գրություն երկսյուն, 21 տող, կանոնավոր բոլորգիր, սև թանաքով, գլխագրերը՝ կարմիր

մանրանկար՝ ավետարանչի 3 (էջ 2ա, 67ա, 186ա), խորան 4 (էջ 2բ, 67բ, 110բ, 186բ), լուսանցքներում 9 փոքր մանրանկարներ, բուսական և կենդանական զարդանախշերով գրեթե ամեն էջում:

պահպանակ՝ չունի

կազմ՝ կաշի, առջևի մասում դրվագված խաչի պատկեր, վրան երկու փոքր մետաղյա խաչեր, հետևի մասում դրվագված է հավերժության խորհրդանշան, թերթերի հատվածում ևս դրվագված է զարդանախշ:

աստառ՝ կարմիր և կապույտ ծաղկազարդ կտոր

հիշատակարան գրչի 244բ-245ա, հետագայի 66բ, 244ա, 245ա,

վիճակը՝ բավարար, թերթերի վրա կան խոնավության հետքեր

110-րդ էջում 3-րդ ավետարանչի մանրանկարի էջը հանված է:

Հիշատակարան գրչի

(էջ 244բ-245ա) Արդ գրեցավ սուրբ աւետարանս ձեռամբ մեղսամած գրչիս սուտանուն Արիստակէս եպիսկոպոսին: Ով եղբարք անմեղագիր լերուք, խաղաղություն չկէր, Ի գլուխ աւետարանի /անընթեռնելի/ եմ գրեր, Ա Նախճվան, Ա Սիսիան, և այլ մնացորդն ի սարերն, վասն ծովացեալ մեղաց մերոց: Անաւթան պիտանի բաց թէ հղաւր տիրոջ, որ մի ես անարժան, անպիտանելի վայ և եղուկ և եղկելի, որ չար գործով զաշխարհս լցի և զպատվիրանս ոչ պահեցի և յաստուծոյ յամութելի ձեռամբ իմով ես գրեցի և Արիստակէս անուն կոչի տկար անձամբ և ցաւոտի մարմինս բտեալ եմ, հոգիս տխրի, անունս ունիմ գործս չէ բարի: Ով աւետարանիս, որ տէր լինի մեղավորիս տէրն ողորմի. ամէն: Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղութս ձեր զԱրիստակէս եպիսկոպոս և Պետրոս գպիրն և կողակից Գուլգուն և Հայրն իւր զտէր Պողոսն և զմայրն Մէլիք խաթուն և բազում աշխատեցան ի վերայ մեզ և վարձս յաստուծոյ առնուն և աստուած ուրենց հոգին յարքաութենին արժան առնէ. ամէն. ի թվին ՌԿԶ (1617):

Հիշատակարան հետագայի

(էջ 66բ) Յիշատակէ սուրբ աւետարանս Սիմոնին և կինակցուն Բուվաին և որդոյ նորա մահտեսի Աւէտին, որ ես Սիմոնս իմ հալալ արդեօք այս սուրբ աւետարանս առի ետի ի զուռն Անգղայ սուրբ Գէորգայ եկեղեցին: Ով հեռացուցէ կամ ծախէ կամ գրավէ պատիժ Կայենին առնէ և անէծք Յուդայի և խաչհանօղացն ընկալցի և արդ, ով աստուածասէր քա-

հանայք, որժամ ընթեռնուք սուրբ աւետարանս յիշեցէք զՍիմոն և իւր համայն ննջեցեալս և դուք յիշեալ լինիք առաջի աստուծոյ:

Հիշատակարան հետագայի

(էջ 244ա) Արդ վերստին նորոգեցաւ աւետարանս ի թվականութեանս հայոց ՌԿԶ (1617):

Հիշատակարան հետագայի

(էջ 244ա) 1883թ. մայիս 11 հանդիպեցայ սուրբ աւետարանիս, Ղևոնդ վարդապետ:

Հիշատակարան հետագայի

(էջ 245ա) Յիշեցէք ի Քրիստոս և աստուած ողորմի ասեք Հոռոմին և դուստր Գուլվարդին, որ տուին իւրեանց հալալ վաստակոց և գնեցին Բ ղուռուշ զայս սուրբ աւետարան և դրին յԱնգղ ի դուռն սուրբ Գէորգայ զօրաւարին: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զ Հոռոմ և զորդին Դազպար և քույր Գուլվարդն և զհայրը Մարտիրոս և զայրն Սիմոն և ՅՕՅ մօրն Հռիփսիմին և մորքրօջ Գարոյին: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զ Հոռոմ, որ Ա ղուռուշ էտ և զԳուլվարդն յիշեցէք, որ Ա ղուռուշ էտուր և գնեցին զսուրբ աւետարան և դրին ի դուռն սուրբ Գէորգայ զօրաւարին: Անջինջ յիշատակ իւրեանց հոգուն, ամէն: Ով ոք ծախէ կամ գրաւ դնէ կամ հեռացուցանէ զանէծքն Յուդային և կայենին և զպատիժն խաչհանողացն առցէ. ամէն: Գրեցաւ ի թվին ՌՄԴ (1755):

Ձեռագիր Ms. Arm. f. 28

ԽՐԱՏԱԳԻՐՔ - ԱՌԱԿԱԳԻՐՔ

թվական՝ 1660

վայր՝ Տաուշի Թաուզ գյուղ

գրիչ՝ Եսայի

նյութ՝ թուղթ

թերթաքանակ՝ 167, որից 7-ը (160-167) վերանորոգված և անընթեռնելի

մեծություն՝ 13x10x4 սմ.

գրություն՝ միասյուն, անկանոն բոլորդիր. 17 տող, չագանակագույն և սև թանաքով, վերնագրերը կարմիր թանաքով

մանրանկար՝ չկա

պահպանակ և կազմ՝ չկա

հիշատակարան՝ գրչի (էջ 64-65), հետագայի (էջ 65)

Ձեռագիրը վատ վիճակում է: Առջևից և վերջից թերի: Որոշ էջերում թանաքը տեղ-տեղ գունաթափված է: 158-167 էջերը վերանորոգված են և անընթեռնելի:

Ձեռագիրը պահվում է փոքրիկ տուփի մեջ (թերևս պատրաստված XX դարի սկզբում):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

էջ 1-4- սկիզբը թերի խրատ

էջ 4ա- Եկեսցուք ի կարգ քահանայության. այսպէս ասէ դիրք թէ...

էջ 12ա- (անընթեռնելի)... պարտ է քահանային խրատել և լսեցուցանել ժողովրդեանն...

էջ 17ա- Եկեսցուք ի բան իմաստասիրին, որ ասէ որ ողորմի աղ-
քատին փոխ տայ...

էջ 24ա- Խրատ և քարոզ վասն գողի և զրկողի. Այժմ եկեսցուք ի
տեսութիւն աստուածային բանիւ, որ ասէ մի գողանար...

էջ 27բ- Խրատ և քարոզ ծնողաց և որդոց. Պարտ է որդոցն ղծնողսն
պատուել և ոչ անարգել...

էջ 33բ- Քարոզ և խրատ վասն աղաւթից. Պարտ է ամենայն քրիս-
տոնէից որ աւուրն Գ անգամ անխափան կատարեն զաղաւթքն...

էջ 36ա- Եւ պարտ է գիտել, զի որք կուսութեան աստիճանն կարգ
ստանան...

էջ 40բ- Խրատ վասն հպարտութեան, զի հպարան և անհնազանդն
ատելի է աստուծոյ ...

էջ 44բ- Վասն կարգաւորաց ասէ. զի թէ ուղիղ և սուրբ պահեն
զկարգ քահանայութեան հաւասարեն հրեշտակաց աստուծոյ...

էջ 52բ- Դարձեալ խրատ իմաստնական և բանական, որ է այսպէս.
Մարգոյն, որ վայելէ Դ իրք է, որ զմարդն ի մեղայ պահէ...

էջ 56բ- Հարց. թէ զինչ պատճառի տայ աստուած մեծութիւն և
հարստութիւն մարգոյ. Զորս իրաց մեծութիւն տա աստուծոյ մարգոյն
մէկն...

էջ 59բ- Խրատ մարմնաւ, որ կենցաղոյս հպարտութիւն մարգոյն,
զորով ճանաչի զամենայն մարդոյ իւր խելքն իւրեանն իշխանն է...

էջ 61ա- Իններորդ բան կանոնական ոչ է պարտ քրիստոնէին երդ-
նուլ սուտ...

էջ 66ա- /առակ/ Արջն ու եղբարք եղեն և արարին դաշ-
նադրութիւն...

էջ 67բ- առակս և խրատ զարմանալի և շահաւետ. ի քաղաք մի
աւադ երէց կամեցաւ զորդին իւր քահանայ առնել...

էջ 69ա- Գազան մի կայ ի ծովն, զի յորժամ քաղցենա...

էջ 69բ- Այր մի աղքատ խորովէր սակաւ միս ի անապատի և ահա
արծիւ մի յանկարծակի...

էջ 70ա- Մեկ այրի կին ունէր տղա մի և սկսաւ տղայն դողութիւն
անել...

էջ 70բ- Կենդանի մի կա, որ արջ ասէն. յորժամ ձմեռնամուտն հա-
սանէ...

էջ 71ա- Գառն մի ցանկալի մնացեալ կայր ի փարախն...

էջ 72ա- Աղուեսը և խեցգետինն եղեն եղբայրք և արարին ցան և
վար...

էջ 72բ- Կաքաւն երթայր կըկվելով և յանկարծակի անկո ծուղակն...

էջ 73ա- Կաքաւ մի կայ, որ գողանա զձու այլում կաքաւի և տանի
գնէ իւր բունն և թխսէ...

էջ 73բ- Վարազն ունէր զատամունս իւր...

էջ 74ա- Ծառ մի կայր յոյժ բարձր և տէր և նորա մեղր կաթա-
ցուցանէր...

էջ 75ա- Ուղտն, գայլն և աղուեսն եղեն եղբարք և գնացին ի
յորս...

էջ 76ա- Արծիւն, յորժամ ծերանա, թռչի և բարձրանա մերձ ի տափ
արեգական...

էջ 77ա- Աղուեսն ետես զպանիրն ի որոգայթն, երթայր առ գայլն և
ասէ...

էջ 78ա- Խաւսողն աղաղակէր և աղութէր ի ծառի մի. գայ աղուեսն
նենգութամբ ի տակն ծառին...

էջ 79ա- Աւձն եղև սնդիկն հողագործի միոյ...

էջ 80ա- Աղվեսն քաղցեաւ և ետես սպիտակ հաց մի...

էջ80բ- Աղվեսն գետն անկաւ և լինէր գետարար...

էջ 81ա- Իշուն աւետիս ետուն, թէ ցնծա և ուրախ լեր. զի թոռն ծնաւ քեզ...
էջ 81բ- Առիւծն կալաւ զաղվեսն և արար իւրն սպասաւոր...
էջ 83ա- Ասացին աղվասուն, թէ քանի ցեղ արւեստ գիտես...
էջ 83ա- Գազան մի կայ ի ծովն, որ հուր ուտէ...
էջ 84ա- Կին մի յայրի ունէր կով մի և խորթն նորա ունէր էշ մի...
էջ 84բ- Առիւծն հիւանդացաւ. վայրենիքն և ամենայն հորսերն ի տես գնացին իւրոց թագաւորին...
էջ 85բ- Առիւծն ծնաւ կորիւն մի և ժողովեցան ամենայն կենդանիքն ի տես...
էջ 86ա- Որսորդ մի ըմբռնեաց կաքաւ մի և կամեցաւ զենուլ զնա...
էջ 86բ- Աղվեսն և արծիւն եղեն եղբարք...
էջ 88ա- Իշուն բնութիւն է, որ մի անգամ թէ...
էջ 88բ- Այր մի աղքատ ունէր որդիք և դուստր բազում...
էջ 89բ- Կայր թագաւոր մի չար, որ զդատաստանն անիրաւ առնէր...
էջ 94բ- Այլ առակ վասն արբեցողի և անդարձ մեղաւորի...
էջ 96բ- Այր մի մարդասպան փախեաւ և գնաց անցանել ընդ դետն...
էջ 97ա- Մարդ մի խիստ դառն աղքատ էր և փոքրիկ զաւակունք շատ ունէր...
էջ 98բ- Ծիտն գնաց առ մրճիւն և խնդրեաց կերակուրին մանէ...
էջ 99բ- Ճաղացպան մի հիւանդացաւ. նա եկն հրեշտակն՝ թէ առնու զհոգին...
էջ 101բ- Թագաւոր մի քրիստոնյա ի սուրբ ճգնաւոր հայր մի տես...
էջ 103բ- Աշխարհի էրեց զմարմինն Քրիստոսի եղիր ի փեղակն մեղուաց...
էջ 104ա- Ոմն քրիստոնեա պարտ էր հրէի միոյ ձ դահեկան...
էջ 105ա- Մեղաւոր ոմն ի ժամ հիւանդութեան խոստովանեցաւ զանցանքն իւր...
էջ 108բ- Խրատ վասն դաւանութեան մերոյ հաւատուց...
էջ 111բ- Զաւակի լեզուն որ արձակի առաջ զայս պիտի յուսուցանել...
էջ 115ա- Տեսիլ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին.
էջ 122ա- Խրատ և քարոզ վասն կիրակէի.
էջ 138բ- Ազգականութեան եղին կանոնք հայրապետքն.
էջ 140ա- Եւ վասն մատաղի.
էջ 140բ- Վասն քահանայի.
էջ 142բ- Վասն քահանայից առնելոյ զպտուզս ի ժողովրդոց.
էջ 143բ- Վասն յիշատակի ննջեցելոց...
էջ 145ա- Վասն անկարծամահի.
էջ 145բ- Մեռելի դատաստան...
էջ 147բ- Մարդ թէ մեռանի առանց կտակի...
էջ 148-158 Մանր խրատներ

Հիշատակարան գրչի

(էջ 64բ-65ա) Փառք ամենասուրբ կարգաւորութեան հաւր և որդւոյ և սուրբ հոգոյ այժմ և միշտ և յաւիտեանս ամէն: Արդ գրեցաւ գիրս խրատական ձեռամբ Եսայի գրչի յերկիրս Տաւուշ, ի գեղս, որ կոչի Թաւուզ ընդ հովանեաւ սուրբ նահատակիս, ի յաթոռս Խորանաշատայ սուրբ Աստուածածնիս, ի Վանական վարդապետի սուրբ գերեզմանիս: Ի յաթոռակալութիւն ի տէր Յովհաննէս կուսակրաւն արհեպիսկոպոսի և տէր Բարսեղ արհեպիսկոպոսի, ի թվաբերութիւն հայոց ՌՃԹ (1660): Յիշեցէք յԵսայի գրիչս և կենակիցն իմ Խոսրովդուխտն և որդիքն իմ Ստեփանոսն, Սենեքարիմն, Սրապիոնն և գստերքն իմ Խաթունն, Նազլուխանն, Սառիկն

և Զարիպիանն, հանդերձ ծնաւղաքն իմովք: Աստված զձեզ յիշէ ի գալստեանն ամէն:

Հիշատակարան հետագայի

(էջ 65ա) Արդ ես մեղաւոր տիրացու Կարապետ, որդի տէր Իսրայելի ըստացայ զայս գիրս ի հալալ ընչից իմոց ՌՄԾԵ (1808) թվիս հայոց: Եւ արդ հանդիպողքս սորին օրինակելոյ և կամ գործածելոյ մեկ լիայբերան աստուած ողորմի ասասցէ և ողորմեսցէ ձեզ բարերարն աստուած:

Ձեռագիր Ms. Arm. d. 25

ԱՎԵՏԱՐԱՆ

թվական՝ 1597

վայր՝ Ջուղա

գրիչ՝ Անանիա վարդապետ Շամբեցի

ծաղկող՝ Հակոբ Ջուղայեցի

կազմող թուղթ կոկող՝ մահդասի (մահաեսի) Կիրակոս

ստացող-պատվիրող՝ Թումա եպիսկոպոս, Խաչատուր սարկավագ և իր ծնողները

նյութ՝ թուղթ

քերթաքանակ 323, 2 էջ դատարկ

գրություն՝ երկսյուն, կանոնավոր և խոշոր բոլորգիր, 21 տող

մեծություն՝ 28x19x5 սմ.

գրի դաշտ՝ 12x19.5 սմ.

մանրանկար՝ 9 էջ ավետարանական թեմաներով ձեռագրի սկզբում Դատաստան ահեղ Քրիստոսի, Ծնունդ Յիսուսի Քրիստոսի ի Բեթղէէմ, Այլակերպութիւն, Ոտնլվա, Կանայք իւղաբերք, Համբարձում, Հոգեգալուստ, Գաբրիելյան փողն ահեղ գոչէ առ տիեզերս, Տեսիլն Եզեկելի մարգարէին/, 10 խորաններ և ցանկեր, 1 և 3 ավետարանիչների նկարները և 4 խորան ամեն ավետարանի սկզբում: 2 և 4 ավետարանիչների նկարները հանված են:

պահպանակ՝ 3 մագաղաթյա էջ՝ երկսյուն երկաթագիր գրությամբ (Մարկոսի ավետարանից): Պահպանակներից մեկը 21x26.5 սմ, մյուս երկուսը 18.5x27 սմ. չափսի են, ձեռագիրը նորից կազմելու ժամանակ պահպանակները հանվել են և այժմ պահվում են առանձին կազմի մեջ Ms. Arm. d. 25* համարի տակ:

կազմ՝ հետագայի, նոր, հավանաբար կազմված է Բոդլեյան գրադարանում: Ձեռագրի հին կազմը պահվում է առանձին՝ Ms. Arm. d. 25** համարի տակ: Այն տախտակյա է՝ վրան հավանաբար մահուգե կամ թավշե մուգ գույնի (ամենայն հավանականությամբ սկզբնապես կանաչ, այժմ ավելի շուտ շագանակագույնի նմանվող) խավերը մաշված կտոր, ներսի կողմից նույնպես կանաչ գույնի կտոր: Կազմի վրա կան մետաղյա խաչերի և դամերի հետքերի: Առջևի մասում կան 5, իսկ հետևի մասում մեկ պոկված խաչերի հետքեր:

հիշատակարան գրչի էջ 8ա, 17ա, 154բ, 157ա, 248բ, 250ա, 319ա-323բ, ծաղկողի՝ էջ 17ա, ավետարանչի մանրանկարի տակ, հիշատակարան հետագայի՝ էջ 5բ:

Ձեռագիրը լավ վիճակում է: Թուղթը որակյալ, հաստ: Լուսանցազարդեր ունի գրեթե ամեն էջում: Գրված է սև թանաքով. գլխագրերը և վերնագրերը կարմիր թանաքով, երբեմն զարդանկարներով:

Հիշատակարան գրչի

(էջ 8ա, մանրանկարի մեջ) Տէր Յիսուս յորժամ գաս և երևիս փառօք դասեաց ի դասս ողորմութեամբ քո երկոտասան վարդապետաց, զգծող սուրբ գրոցս Անանիա բաբունապետն, որ աղաղակէ առ քեզ տէր վասն աշխարհէ յիշեայ ողորմութեամբդ քո: (Հիշատակարանը գրված է ծնկաչոք Անանիայի նկարի առջև, որ ձեռքերը պարզել է դեպի խաչի կենտրոնում գտնվող Քրիստոսի նկարը: Մանրանկարն ունի հետևյալ մակագրությունը. Գաբրիելեան փողն ահեղ գոչէ առ տիեզերս: Խաչն փայլէ յարևելից):

Հիշատակարան գրչի

(էջ 17ա, Մատթէոս ավետարանչի մանրանկարի տակ) Զնկարող սուրբ աւետարանիս զտէր Յակոբ անուն Զուղայեցի յիշեցէք ի բարի: Տէր իմ փրկիչ ամենայնի, որ մարդացար վասն ամենի, մեղաւորաց դատաւոր լինիս ի հայցելոյն քոյդ ծնաւղի: Մարիամու աստուածածնի, որ միշտ ասէ տէր իմ որդի: Խնայեայ ծառայքդ քո բարի, կոչեայ զդասս սուրբ երամի: Յակոբ անուն քահանայի, աւետարանս որ ծաղկեցի, ոսկով, դեղով, գունով ի մի, վասն անուան տէր Թումայի: Դուք յիշեցէք հաւասար, մի լի բերանով տէրն ողորմի որդրքն իմ Միրզաբէկն, պարոն Ոսկեան ի մի շարի: Քահանայից սուրբ երամի, ժողովրդոց մեծի փոքրի, սարկաւագաց, հաւատաւորի խնդրեմ առ ձեզ միշտ յիշել: Աւետարանս է շնորհաւոր, որդիքն որ եղեալ է նոր Միրզաբէկն, Ոսկեանն /անընթեռնելի/ փառաւոր, դու տէր Յակոբ կացի յորդոր ի նմին ընդ արև տեսանի կարծես /անընթեռնելի/ ոքա արքայ լինի, մինն շնորհս քահանայի ի տիրոջմէ բերկրունքն կատարի:

Մանրանկարի կողքը՝ առանձին. Անանիա գրոց աշակերտս գրեաց ծաղկողի անուն, ինքն չէր գրեր:

Հիշատակարան գրչի

(էջ 154բ, Մարկոսի ավետարանի վերջին՝ Քրիստոսի համբարձմանը վերաբերող հատվածից հետո) Համբարձմանն կարդա: Եւ զպարոնտէր Թումա եպիսկոպոսն աւրհնեա; Եւ զգրողս յիշեա: Ամէն:

Հիշատակարան գրչի

(էջ 157բ) Ստացող ի սուրբ և կենսաբեր աւետարանիս, զտէր պարոնտէր Թումա եպիսկոպոսն ողորմեայ Քրիստոս ի սոսկալի ատենին: Ամէն:

Հիշատակարան գրչի

(էջ 248) Ր բարերար և մարդասէր փրկիչն աշխարհի, որ հաշտեցոյց զանկեալ բնութիւնս ընդ հաւր աստուծոյ, նոյնպէս հաշտեսցի գթութեամբն և ողորմութեամբն կրկնակի գալստեան իւրոյ, ընդ ձայնին երանական, որ ասէ եկայք աւրհնեալք հաւր իմոյ, նոյն ձայնիւն կենդանացոյց ի մեռելութենէ մեղաց զպարոնտէր Թովմա եպիսկոպոսն և զամենայն արեան մերձաւորաւքն և խառնեա ի ջոկքն սուրբ հայրապետացն և քեզ փառք մատուցանէ յաւիտեան:

Անանիա փծուն ախմար գրաւղ վարդապետս յիշեցէք:

Հիշատակարան գրչի

(էջ 250) Զստացող աւետարանիս զպարոնտէր Թովմա եպիսկոպոսն և զեղբաւրորդդր սարկաւագ Խաչիկն յիշեցէք ի բարին. աստուած ղձեզ յիշէ:

Հիշատակարան գրչի

(էջ 319ա-323բ) /.../ Եւ արդ աղաչեմ ամենայաղթ զաւրութիւն աստուծոյ որ ետ կարողութիւն և ցաւալից վտիտ ոդոյս, որ աւարտ եղև ի վերայ ամենայն հայկազեան սեռիս: Մանաւանդ երրորդություն մի բնութիւն դաւանողաց, բազում նուազութիւն և գերութիւն և սպանումն և

աւերք եղև ի վերայ ազգիս միամիտ հաւատիս, զի հանգիստ և դադարումն ոչ գոյ ի մերում ժամանակիս:

Այլև վերին ազդեցութեամբն և ոգորմութեամբն աստուծոյ, որ միշտ չարժէ մարդկային բնութիւնս, որպէս և եղև ի վերայ պատուական և մաքուր, գովելի և ընտրեալ ի դասուց հայրապետաց, գովելագ և պատուելագ յամենայն եկեղեցայց, ով տէրն քաղցր եղանակիչ, պարոնտեր Թովմա եպիսկոպոսն:

Արդ աղաչեմ զսրբասէր քահանայսդ, զկատարաւղ մեղսաքաւիր սուրբ պատարագի և զընթերցող սուրբ աւետարանիս, յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր զպարոնտեր Թովմա եպիսկոպոսն և զեղբորորդին իւր զսարկաւագ Խաչատուրն և զծնաւղքն նորա, որ ամենայաւժար սրտիւ և սիրով գրել ետուր զսուրբ աւետարանս ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ իւր և ծնաւղացն և ամենայն ազգականացն ամէն: Ի թուականութեանս հայկազեան տումարի ՌԽԶ (1597), տանուտէր տարոյս կշիռն, հոռի ամսոյն, ի Ա վերադիր տարոյն ԺԲ գիր տարոյն յինն: Ի հայրապետութեան Մելքիսեդ կաթուղիկոսին:

Գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Անանիա վարդապետին Շամբեցւոյ ի դուռն սուրբ Ստեփանոս Նախավկային և ի տիրամայր սուրբ Աստուածածնին և ի սուրբ Գէորգ զաւրավարին և ամենայն սրբոցս, որ աստ կան հաւաքեալ: Նաև ի սոցին սպասաւորացս, որ կան ի դուռս սուրբ մենաստանիս. զտէր Մարտիրոս քաջ և արի բաբունապետն և վերծանող խորոց բանալի վարդապետն, զտէր Սարգիս եպիսկոպոսն, զտէր Շմաւոն եպիսկոպոսն, զտէր Յովսէփ եպիսկոպոսն, զտէր Ամուէլ եպիսկոպոսն. զտէր Խաչատուր եպիսկոպոսն, զտէր Յակոբ եպիսկոպոսն, զտէր Հայրապետ եպիսկոպոսն, վանից հայր եկեղեցպան, իմ հորեղբայր տէր Բարդուղիմէոսն, տէր Անդրէասն, անաւթապահ տէր Թումէն, տէր Յեսսային, տէր Ներսեսն, մեծ տէր Պետրոսն, տէր Պաւղոսն, տէր Ստեփանոսն, տէր Աստուածատուրն, տէր Ըռսակէսն, տէր Գորգն, փոքր Մարտիրոսն, և այլ ամենայն եղէն միաբանքս յիշեցէք ի բարի. աստուած զձեզ յիշէ ամէն:

(...) Դարձեալ յիշեցէք ի բարին աստապատայ միաբանքն. զտէր Զաքարիա քաջ և արի բանիբուն բաբունապետ անձանձիր ուսուցանող վարդապետն, զտէր պարոնտէր Թումա եպիսկոպոսն, զտէր Մարտիրոս եպիսկոպոսն, զտէր Ղազար եպիսկոպոսն, զտէր Մարգարէն, զտէր Աւետիսն, զտէր Մկրտիչն, զտէր Յակոբն, զտէր Սարգիսն, զտէր Յովհաննէսն, զտէր Գրիգորն, զտէր Բարսեղ երեցն, զտէր Հայրապետ երեցն, փոքր ժամարար տէր Յովհաննէսն, տէր Խաչիկն: Եւ աւրհնեալ և փառաւոր դաւլաթաւորքն դեղին՝ պարոն Պռաւշն, պարոն Աղափիրին, պարոն Փիրիգուլն, պարոն Խաւլակարապետն, Ջանիբեկն, Միրիջանն, Աղաբեկին: Ով սոիրք քահանայք և իմաստունք, յորժամ ընթեռնուք զսուրբ աւետարանս յիշեցէք զամենեսեանն ի սուրբ աղաւթս ձեր և դուք յիշեալ լիջիք ի հաւրէն և ի թառացն նորայ արժանի լինիք ամէն:

Արդ ես ծառայ ամենեցւոյն աղաչեմ զձեզ և հայցեմ ի ձենջ. խնդրեցէք ամենասուրբ աստուածածնէն և ներող թագաւորէն, որ չնորհէ թողութիւն յանցաւոր մեղուցեալ Անանիա տրպանուն վարդապետին և իմ հաւրեղբայր տէր Բարդուղիմեոսին (...)

Յիշեցէք ի բարի մահտեսի Կիրակոսն, որ բազում աշխատեցաւ ի թուղթ կոկելն, ամենեքեանդ առհասարակ ողորմի ասացէք և յիշեցէք ժամահար Աղդիջէն և Սառա կոյսն, աստուած զձեզ յիշէ ամէն:

Եղբարք, Մատթէոսէն մինչ ի «մի երկնչիր ի դուռն սուրբ Ստեփանոս Նախավկային», գրուաւ յայն տեղէն մինչ ի յաւարտն ի մայրաքաղաքն Ջուղայ, ի սուրբ Աստուածածնի դուռս, որ կոչի վերին կաթան, որ հանապազ զիւր ողորմութիւնն կաթեցուցանէ ամենայն վշտացելոց և տէր աստուածն ամենայնի աւրհնեսցէ զքահանայքն սուրբ եկեղեցոյս մեծ և փոքրն և դաւուլաթաւորքն ժամատանս զպարոն Խաչիկն և պարոն Նուրին

և խոջա Արիջանն, որ բազում ճաշիւ և կերակրով ընդունեցին մեզ. փոխարէն անմահական սեղանոյն առցեն, ամէն:

Հիշատակարան հետագայի

(էջ 5բ) Bouth for my dear brother Jonas King, professor in America, as a remembrance and a taken of love from his brother Joseph Nolff.

Doctor Common London

(թարգմ.) Գնված է իմ եղբայր Ջոնաս Կինգի համար, որը պրոֆեսոր է Ամերիկայում, որպես հիշատակ և տրվում է սիրով իր եղբայր Ջոզեֆ Նոլֆֆի կողմից: Դոկտոր Քոմմոն Լոնդոն

Ձեռագիր Ms. Arm. b. 3

ՅԱՅՍՄԱՎՈՒՐՔ

թվական՝ 1631

վայր՝ Շոշ (Պարսկաստան), գյուղ Թորսըկան

գրիչ՝ Գասպար երեց

ստացող՝ Գասպար, Պետրոս, Ակոբ

նյութ՝ թուղթ

թերթաքանակ՝ 297 էջ

գրություն՝ բոլորգիր, երկսյուն, 37 տող, գրված է սև թանաքով, գլխագրերը և վերնագրերը՝ կարմիր:

մեծություն՝ 25x36.5x5 սմ.

գրի դաշտ՝ 18.5x30.5 սմ.

մանրանկար՝ էջ 8ա լրիվ էջ (տերունական), էջ 8բ (խորան), լուսանցազարդեր և նախշազարդ գլխագրեր ամեն նոր նյութի սկզբում

ցանկեր՝ 1-4 էջ

հիշատակարան գրեթե ամեն նյութի վերջում կրկնվում է. «Ողորմի Քրիստոս աստուած ստացողի գրոցս Պետրոսին և իւր ծնաւղացն և ինձ մեղապարտ գրչիս Գասպար իրիցիս»:

հետագայի հիշատակարան էջ 8ա

կնիք՝ Bodleyan Library *(առաջին և վերջին էջում)*

Ձեռագիրը սկզբից և վերջից ունի պակաս էջեր: Սկզբի և վերջի էջերը մասնակիորեն վերանորոգված են:

Հիշատակարան հետագայի

(էջ 8ա, մանրանկարի տակ) Յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր Հարոնի որդի (անընթ.) անուն Յակոբ և Սողոմոնի որդի Յարութիւնս որ եմ ի մէջ տարակուսաց վասն մերոյ չար գործոցն, որ օր ըստ օրէ մեր անօրենութիւնն բազում անէ: Վայ մեղավորիս թէ ինչպէս պիտի լինի կամ ինչ պատասխանեմ արդար դատաւորին մերոյ. ճար չունեմ բայց միայն անարատ սուրբ աստուածածնին, որ միշտ բարեխօսէ...(չարունակութիւնը ձեռագրի վերանորոգման ժամանակ կտրվել է):

Ձեռագիր Ms. Arm. b. 4

ՅԱՅՍՄԱՎՈՒՐՔ

(մաս երկրորդ, Ms. Arm. b. 3-ի չարունակությունը)

թվական 1631

վայր Շոշ (Պարսկաստան), գյուղ Թորբսկան

գրիչ Գասպար երեց

ստացող Գասպար, Կիրակոս, Ղուկաս

նյութ թուղթ

քերթաքանակ 301 էջ

գրություն բոլորգիր, երկսյուն, 37 տող, գրված է սև թանաքով, գլխագրերը և վերնագրերը կարմիր:

մեծություն 24x40x5 սմ.

գրի դաշտ 19x30.5 սմ.

մանրանկար էջ 90բ կես էջ (Հարության էջի վրա), լուսանցազարդեր և նախշազարդ գլխագրեր ամեն նոր նյութի սկզբում

կազմ հետագայի

պահպանակ, աստառ չունի

կնիք Bodleian Library

Ձեռագիրը սկզբից թերի է, վերջին էջերը մասնակի վերանորոգված են:

Հիշատակարան գրչի Գրեթե ամեն նոր նյութի վերջում կրկնվում է հետևյալ հիշատակությունը. «Ողորմեա տէր Յիսուս ստացողի գրոցս Գասպարին և իւր ծնողացն և ինձ մեղաւոր գրողիս»:

Հիշատակարան գրչի

(էջ 300-302) Ծայրալիր պարապմամբ ըստ առաջնորդականին, որ տանի ուղիղ ուղևորութիւն, առաջնորդել անսայթաքաբար, հասանել ի նպատակաց և ի կէտ աւարտման եկեղեցական տառիս: Որ է լրումն հոգևոր տօնից և մեզ նախանկար աստուածահրաշ աւանդից: Իսկ զրանն յառաջ քան զլինելն արարածոցս հրաւիրմամբ որդեգրութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի և որք նովաւ վեր երևեցան սուրբք և սիւնք յարելոյ անդամոց և ի մեզ շարունակելոց կցելոցն ի գլուխն Քրիստոս: Մեք ի նա և նա ի հայր զի հայր ի մեզ իցէ և մեք ի նա որպէս ճշմարիտ բան նորայ:

(...) Զոր տեսեալ զայսպիսի գանձս աստուածային և պայծառ լուսով զոր տեսեալ ծառայն աստուծոյ Գասպարն և մեծ փափագմամբ և ջերմեռանդ սրտիւ ցանկացող եղև սուրբ տառիս և ի խնդիր ելեալ այս համբարեալ գանձիս և լուսափայլ և անդին մարգարտիս, անուշահոտ մանուշակիս և վարդափթիթ բուրաստանիս և ետ գծագրել զսա ի հալալ և արդար վաստակոց իւրոց յիշատակ հոգոց իւրոց և ծնողաց իւրոց և եղբարցն և քուերցն և ամենայն ազգականացն: Եւ արդ ևս գծագրեցի զսա ի վերծանութիւն սքանչելեաց ամենայն արեամբ ներկեալ սուրբ մարտիրոսացս: Յորս և յիշատակի գերահրաշ տօնի տէրունականք և առաքելականք: (...)

Այլ և վերին զօրացն իններեակ դասուն և զպատմութիւն կարծրագոյն և զսքանչելի չնաչխարհիկ վարուց սրբոցն, որ աստ կան հաւաքեալ, որ օր ըստ օրէ սոսոեցուցանէ և սոսկացնէ զոսկերս լսողացն: Եւ է սա յիշատակ ննջեցելոցն ը զուարճութիւն տօնողաց, որք սովաւ հրճուին ի կեանս լուսազարմիկ վկայեցելոց անձանց սրբոցն, զի տօնասիրացն պարտ է զուարճանալ մինչև յաւիտեանս: Արդ ես Գասպար մեղօք ի լի: (...)

Աստուածածին կոյս սրբուհի իմ յոյսն դու աւուր մեծի բարեխօսեա քո միածնի վասն անարժան քո ծառայի: Ով որ զսակաւ բանքս լսէ նա մեզ ասէ տէրն ողորմի, զի տէրն քաղցր է և բարի ինձ ամենիցդ ողորմեսցի ամէն: Եւ արդ ես անպտուղս ի բարեաց, մեղաւորս արդարոց և անկատարս ի կատարելոց, մեղանչականս անմեղաց և անկարգս ի կարգաւորաց, անյիշելիս ի գրչաց և անարհեստս յարուեստաւորաց, տգէտս ի գիտնականաց բազմամեղ և անարժան, մեզսամած սոսկանուն քահանայ Գասպար, որ

զձև ունիմ քահանայի և գործոյն թափուր և ունայն գտանիմ, տեսի զսէր և զփափագ սորա զոր ունէր հոգևորսն և իմով իսկ տկարութեամբս յանձն առի զայս մեղսամած մատամբ իմով և իմոյս աշակերտի աստուածատրի, բազում և մեծ յաշխատութեամբ հասուցաք զսա յաւարտումն ի յանուանի գեօղս Թորըսական. ի յեզր Շաւշ քաղաքին, որ է Ասպահան մօտ ի Նարընդ ղալայն, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս: Ի հայրապետութեան Մովսէսի և առաջնորդութեամբ Խաչատուր վարդապետի և ի թագաւորութեան պարսից Շահսաւուն և ի թուականիս հայոց ՌՁ, ամի ի դառն և ի վչտալից ժամանակիս, յորում կամք ընդ հարկի և ընդ ծառայութեան ազգիս պարսից: Վասն որոյ բարեխօսութեամբ սուրբ և փառաւորեալ աստուածածնին Մարիամու և ամենայն ընտրելոց սրբոց Քրիստոս աստուած, որ տէրն ի փառաց և տուող ողորմութեանց տացէ զիւր առատ ողորմութիւն և զանբաւ բարերարութիւն ստացողի տառիս Ղուկասին և իւր ծնօղացն, եղբարցն և քուերցն և ամենայն ազգականաց ինչ մարդ որ յաշխատանք ունի ի վերայ սուրբ գրոցս, խորհրդակից և դասակից արասցէ վկայիցն և զուրախ արար ձայնն արձակեսցէ առ նոսա եթե կայք բարի և հաւատարիմ ծառայք (...)

Դարձեալ ես մեղապարտ և բազմաւէր հոգի Գասպար սոսկանուն քահանայ գծագրող սորայ, զաղէտս տարակուսանաց իմոց առաջի մատուցեալ աղաչեմ զսրբութիւնդ ձեր ով սիրելի և հաւատարիմ ծառայք Քրիստոսի (...) Նաև ծնօղն իմ Պաղտասար քահանայ (...)

Յորժամ հանդիպիք սուրբ գրքիս կարդալով կամ օրինակել թողութիւն արարէք սղալանաց մերոց կամ գրիս խոշորանացն և գրչափոխութեան, զի ոչ են միահամուռ, զի այս առաջին գիրն էր եղբարք, թողութիւն արարէք մեզ մեղաւորացս և ով որ կարդայ կամ օրինակէ վասն աստուծոյ զաւելին բառնայ և զպակասն լնու և մեզ մաղաւորացս լի սրտիւ թողութիւն հայցէ ի աստուծոյ և ինքն թողութիւն գտնու ի կենարարէն Քրիստոսէ:

Ձեռագիր Ms. Arm. c. 5

ՅԱՅՍՄԱՎՈՒՐՔ

թվական՝ XVII-XVIII դդ.

վայր՝ Գանձակի Հովհաննես-Մկրտիչ վանք

գրիչ՝ Յովհաննէս

ստացող՝ Մովսէս քահանա

նյութ թուղթ

թերթաքանակ՝ 492 էջ

գրություն բոլորգիր, երկսյուն, 39 տող, գրված է սև թանաքով, գլխագրերը և վերնագրերը՝ կարմիր

մեծություն 25x39x8.5 սմ.

գրի դաշտ՝ 17x27.5 սմ.

կազմ նոր

պահպանակ, աստառ չունի

Կան հատուկենտ լուսանցազարդեր: Ձեռագրի որոշ էջեր տեղ-տեղ պատռված են, որոշ էջեր մասնակիորեն վերանորոգված

հիշատակարան գրչի՝ Գրեթե ամեն նոր նյութի վերջում կրկնվում է հետևյալ հիշատակությունը. «Որոյ աղօթիւքն ողորմի Քրիստոս աստուած ստացողի գրոցս Մովսէս քահանային և եղբարցն Ներսէսին, Յովսեփին և

Պարխուտարին և ծնողացն Պաղտասարին և Մարիամին և ինձ մեղաւոր Յովհաննէսին»:

Հիշատակարան գրչի էջ 345 ա, բ,

Հիշատակարան ստացողի էջ 345բ -348ա

Հետագայի մանր հիշատակարաններ ձեռագրի լուսանցքներում:

Հիշատակարան գրչի

(էջ 345ա-բ, «Պատմութիւն և Բարեղամու, Աւելեացն Ե և օգոստոսի Ժ» նյութից հետո) Զոր ես մեղաւոր ծառայ աստծոյ բազում աշխատութեամբ և ջանիւ փոքր ի շատէ ծայրաքաղ արարեալ թարգմանեցի գայս ի հայ բարբառ ձեռամբ իշխանի միոյ պատուաւորի: Վասն որոյ ի ձեռն նոցին հգնութեան և հաճոյական վարուց փառաւորի ամենասուրբ երրորդութիւն հայր և որդի և սուրբ հոգին այժմ և միշտ և բարեխօսութեամբ և հգնութեամբ և աղօթիւքն Յովասափու ողորմեա տէր աստուած ստացողի գրոցս Մովսէս քահանային և եղբարցն Ներսէսին և Յովսէփին, Պարխուտարին և կողակցաց նոցին և ծնօղացն Պաղտասարին, Մարիամին և որդւոցն Պետրոսին և Պօղոսին, Յովհաննիսին և ամենայն արեան մերձաւորացն:

Յիսուս Քրիստոս հօր միածին անմեղ անճառ լոյս անքննին, որ կամաւ հօր և սուրբ հոգւոյն իջէր յերկնից յաշխարհ ստորին խորտակեցեր զօձ թշնամին զագամ հաներ յերկրէ յերկին և դասեցէր փառսն առաջին ծննդոցս ետուր զլոյս շնորհին: Արդ աղաչեմ զտէրդ երկնային, զհովիւ (անընթ.) ի յրստացող այս սուրբ գրին զՄովսէս քահանայ քաջ և արին և աղբարցն Ներսէսին, Յովսէփին, Պարխուտարին և ընտանեացն ամենեցուն: Եւս առաւել փցուն գրչի հող և մոխիր ամենայնի Յովհաննէս անուն մեղաւորի և ծնօղացն իմոց Ներսէս քահանայի և Փարի փոխեցելոյն առ Քրիստոս և որ ասէ մեզ ողորմի նա և աստուած իւրն ողորմի յաւուր մեծի դատաստանի ի սոսկալի օրն ատենի ամէն Ը եղիցի:

Հիշատակարան ստացողի

(էջ 345բ - 348ա)- (...) Արդ ես Մովսէս թշվառական և եղկելի յոյժ գազրական, Ներսէս եղբայր իմ պատուական, Յովսէփ ի մեզ էր հարազատ. մեք ոչ կայինք միշտ սրբազան, այլ թավալիմք ի մեղս անդարձական. կրասեր եղբայրն Պարխուտար և նա էր մեզ յոյժ սիրական, յօժար սրտիւ փափաղեցայք գծել տուայք սա միաբան, զի յիշեսջիք ամենքն ի յոյսն աստուած արամնական և ստացայք զայս գանձարան, որ զամենայն սրբութիւնս ունի սա միաբան:

Այլ ես Յովհաննէս մեռեալ ոգի ի մեղս աներկ և անարժան և տարտամ և անպիտան փցուն և անյարմար գրիչս, աղաչեմ յերես անկեալ մաղթանօք զամենայն հանդիպօղսդ սուրբ տառիս տեսութեամբ, կամ ընթերցմամբ կամ գաղափարելով:

(...) Զոր որ պայծառ ջահքն և անաղօտ լապտերքն եկեղեցւոյ Տէր Գրիգորիս Վկայասէրն և տէր Ներսէս շատաչնորհն և Կիրակոս անուն ոմն բանիբուն վարդապետ հոգ տարան և յամենայն ազգաց ժողովեցին զպատմութիւն նահատակութեան սրբոց: (...) Իսկ ի վերջին ժամանակս, որ է թուական հայոց ՊԾ (1401) վարդապետ ոմն շնորհալի Գրիգոր անուն ի մայրաքաղաքէն Խլաթայ Ծերենց կոչեցեալ: Յոյժ կորովամիտ, հանճարեղ և բանիբուն և համեմատ քարտուղար, որ և գրագիր: Ոչ ինչ նուազ գոլով սա առաջին սուրբ վարդապետացս զորս յիշեցաք յանուանէ և զամենայն ինչ և առնոյր ի դին գրելոցն աղքատաց և կարօտելոց բաշխէր: Սա գրեալ և ընթերցեալ բազում անդամ զառաջին կարգեալ սրբոց գիրքս և զի էր կարճառոտ բանք նոցա: Եւ ինքն ըստ իւրում իմաստութեան յաւելի գիրս յայս բազում շահաւէտ և օգտակար բանս ի հարանց վարուց և ի պատգամաւորաց: Եւ տերունական տօնից և գլխաւորաց սրբոց ճառս:

(Այնուհետև տրվում է Գրիգոր Խլաթեցու նահատակության պատմությունը):

(...) Ով քաղցրաբարբառ մանկունք սուրբ եկեղեցւոյ և դասք լոյս երամից յիշեցէք ի սուրբ և աստուածահաճոյ աղօթս ձեր զբազմաչնորհ քահանայք սուրբ եկեղեցւոյս ղտէր Մովսէսն, զտէր Եսային և զտէր Ղազարն և սպասաւոր սոցին ժամհար Ամիրն, որ սիրով պատուեին զմեզ, աստուած նոցա վարձն հատուցանէ միոյն հարիւրապատիկ: Ըստ նոսին թախանձանօք աղաչեմ յիշել և զիս տառապեալ ոգի, տկար գոլով անձամբ և արուեստիւ փցուն և ախմար զբազմամեղ գծող սորին Յովհաննէս և հայրն իմ Ներսէս քահանայն և մայրն իմ Փարին: Եւ խոշորութեան և սխալանաց գրոյս անմեղադիր լինել զթիւրն ուղղելով և զպակասն լնուլով, բարի կամօք և եղբայրական սիրով, զի այս չափ էր կար մեր:

(...) Իսկ ես նուաստ և մեղապարտ Մովսէս երեցս և եղբարքն իմ Ներսէս, Յովսէփ և Պարխուտարն, ստացաք զսա հալալ վաստակոց մերում և ետուք վախմ ի դուռն սուրբ Յովհաննէս եկեղեցւոյն Գանջոյ: Ոչ ոք ունի իշխանութիւն հանել ի սմանէ, ոչ մեր ազգականաց և ոչ օտարաց, ով ոք լրբի, վաճառէ կամ գրաւէ պարտական լիցի Քրիստոսի ահեղ յատենին: Եւ խնամօք պահողքն գրոցս, վայելողքն օրհնին յաստուծոյ և ընդ սրբոց առաքելոցն և հայրապետացն դասակցեսին: Եւ ամենայն ամի ի վճար դրոցս կարդան զյիշատակարանս և զերանի ում և զՔրիստոս որդի ամենայն ասեն և որք պատահիք սմա յիշեսջիք ի յաղօթս ձեր:

Հիշատակարան հետագայի

(էջ 400բ) Զայս այսմաւուրքս Աստուածածնայ եկեղեցուն է, ով որ գողանայցէ մասն Յուդայի արժանասցէ և զպատիժն Կայենի: Ես Աստուածատուրս գրեցի:

Ձեռագիր Ms. Arm. g. 12

ԺԱՄԱԳԻՐՔ

թվական՝ 1664

վայր՝ Էջմիածին

գրիչ՝ Միքայել

նյութ՝ նուրբ և լավ մշակված մագաղաթ

թերթաքանակ՝ 326, դատարկ էջեր 119բ-121ա

գրություն՝ բոլորգիր, 19 տող, հիմնական շարադրանքը սև թանաքով, գլխագրերը և վերնագրերը՝ կարմիր, ոսկեգույն և կապույտ թանաքներով:

մեծություն՝ 9x12.5x5 սմ.

գրի դաշտ՝ 8x5 սմ.

մանրանկար՝ էջ 2ա լրիվ էջ, Գրիգոր Լուսավորչի պատկերով (վատ վիճակում), էջ 2բ մեծ խորան (խոնավությունից գույները թափված), էջ 213ա մանրանկար, էջ 39բ, 55ա, 124բ, 213բ մեծ խորաններ: Փոքր խորաններ, ճակատազարդեր և լուսանցազարդեր առատ: Հիմնականում կարմիր, կապույտ, ոսկեգույն, ավելի քիչ կանաչ գույներով:

կազմ՝ դրվագված կաշեպատ տախտակ, առանց աստառի:

պահպանակ՝ չունի

հիշատակարան՝ գրչի՝ էջ 1ա, 4բ, 326ա,

կնիք՝ Bibliotheca Bodleiana, *էջ 1բ, 191բ, 326ա*

Ձեռագիրը հիմնականում լավ վիճակում է: Որոշ էջերում (հատկապես սկզբի և վերջի) խոնավության հետևանքով մանրանկարների գույները և թանաքը թափված են կամ խառնված իրար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

էջ 1ա- Աղօթից եկեղեցեաց Հայաստանեայց: Որ կատարի ի մէջ գիշերի ի դէմս հօր աստուծոյ: Արարեալ Լուսաւորչին Գրիգորի և Սահակայ հայրապետի և Մեսրովբայ վարդապետի: Եւ Յովհաննու Մանգակունւոյ, հայրապետացն մեր և այլոց վարդապետաց ի փառս աստուծոյ

էջ 3ա- Յովհաննու Մանգակունւոյ ի գաւառէ Աշամունեաց ի գեղջէ Ծախնրստայ: Քարոզ գիշերային պաշտամանց.

-Զարթուցեալքս ամենաքեան ի հանգստենէ քնոյ...

էջ 4բ- Կարգաւորութիւն հասարակաց աղօթից առաւստու ժամուն, որ կատար ի գէմս որգւոյն աստուծոյ. Յորմէ ըմբռնեալ եղև ի հրէիցն:

էջ 7բ- Քարոզ երանելոյ և իբրև ղի բարոյ: Արարեալ սրբոյն Սահակայ և Մեսրոբայ:

-Վասն ի վերուստ խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց...

էջ 14ա- Զկնի աէր յերկնային աւրհնութիւն փառաց առաւստու ի գէմս երրորդութեան ի Կոստանգնուպոլսի ...

-Փառք ի բարձունս աստուծոյ և յերկիր խաղաղութիւն...

էջ 16բ- Քարոզ սրբոց Առաքելոց և մարգարէից և սրբոց Հռիփսիմեացն՝ արարեալ Լուսաւորչին Գրիգորի:

-Աստուած մեծ, հզօր փառաւորեալ լուսաւորից սրբոց...

էջ 22բ- Սարկաւագ վարդապետին ասացեալ

-Յիշեայ տէր զպաշտօնեայքս քո: Զծնօղսն մեր...

էջ 28բ- Կարգաւորութիւն հասարակաց աղօթից երրորդ ժամուն, որ կատարի ի գէմս հոգոյն աստուծոյ իջման: Եւ ի դէմս նախահաւրն ճաշակման և ազատութեան Քրիստոսի:

էջ 29ա- Յովհաննու Մանգակունւոյ

-Միարան ամենեքեան գոհացարուք զմարգասիրէն աստուծոյ և զփրկիչէն Յիսուսէ Քրիստոսէ...

էջ 31բ- Կարգաւորութիւն հասարակց աղօթից վեցերորդ ժամու.

էջ 32ա- Յովհաննու Մանդակունւոյ

-Արթուն մտօք և անգրաւս խորհրդովք՝ կացցուք միաբան...

էջ 34բ- Կարգաւորութիւն հասարակց աղօթից իններորդ ժամու

էջ 35ա- Յովհաննու Մանգակունւոյ

-Սուրբ սրտիւ և հաստատուն հաւատով կացցուք միաբան...

էջ 38բ- Աւրէնք արկանելոյ սպաս եկեղեցւոյ.

-Յոիժամ կամեսցի քահանայն պատարագ մատուցանել...

էջ 39բ- Որ գգեցեալ /անրնթ./ տէր մեր Յիսուս Քրիստոս

-Անճառելի խոնարհութեամբ ի յերկրի երևեցար և ընդ մարդկան շրջեցար...

էջ 45բ- Եւ ասէ զազօթս ի ծածուկ Յովհաննու Ոսկեբերանի

-Տէր աստուած մեր որ զերկնաւոր հացդ զտէր մեր Յիսուս Քրիստոս զկերակուրդ ամենայն աշխարհի...

էջ 55ա- Տէր աստուած զօրութեանց և արարիչ

էջ 69բ- Յովհաննու Ոսկեբերանի

-Գոհանամ և մեծացուցանեմ և փառաւորեմ զքեզ...

էջ 74ա- Տեառն Ներսէսի Լամբրոնացւոյ խրատք և սահման վերագրեալ գործոց

-Քանզի բազում ինչ եցոյց բանս հրահանդութեան...

էջ 77ա- Եռամեծ և քաջ վարդապետի Մխիթարայ Գոչի խստակրաւն ճգնաւորի և բանիբուն հռետորի ասացեալ զաղօթս ի ժամ սուրբ Պատարագի.

էջ 83բ- Կարգաւորութիւն հասարակց աղօթից երեկոյի ժամուն.

էջ 84ա- Ես առ աստուած կարդացի և տէր լուաւ ինձ ընդ երեկոյս ի վաղորդայն...

էջ 93ա- Կարգաւորութիւն հասարակց աղօթից: Խաղաղական ժամուն

էջ 97բ- Կարգաւորութիւն հասարակց աղօթից հանգստեան ժամուն

էջ 109բ- Աղաւթք հնոց սուրբ վարդապետացն արարեալ

-Ամենակալ ամենախնամ աստուած յամենայնի աւրհնեալ...

էջ 116ա- Արդ պաշտման Տեառն Ներսէսի Կլայեցւոյ ասացեալ

-Աշխարհ ամենայն առ իս նայեցեալ ախտակից լերուք...

էջ 121բ- Քաղոց ամսոյ հայոց ի Ա և դեկտեմբեր հռոմայեցւոց

էջ 124բ- Աստուած այս յայտնութեան ճրագալուցի աւուր գիշերն կան նա գլխին փառն հաւատեա...

էջ 162բ- Սուրբ զատկի գիշերն հսկումն է և դից ի սրբութիւն ի վերայ բազմոցի յատենն կանոնագլուխն...

էջ 211բ- Արարեալ և սահմանեալ սուրբ վարդապետին Թումայի Մեծոփեցւոյ ի պայծառութիւն մանկանց...

էջ 213բ-242ա- Խազագրված շարականներ և տաղեր

էջ 242բ- Ժամամուտք կարգաւ

Որ ի հօրէ առաքեցար փրկիչ և մարմնացար ի սուրբ կուսէն...

էջ 253բ- Ալելուք -աշու կարգաւ

էջ 160ա- Սրբացուիք սուրբ պատարագին կարգաւ

-Բազմութիւնք հրեշտակաց և զօրաց...(խազագրված)

էջ 267բ- Մեսեդիք ծննդեան.

-Տէր ասացցիս որդի իմ ես դու և այսօր ծնայ զքեզ...

էջ 271բ- Կարգ մեղեդեաց (խազագրված)

էջ 274բ- կարգ տաղից (խազագրված)

-Անարատ տաճար և առագաստ լուսոյ...

էջ 311ա- Զի զառաջ քան զամենեսեան պարտէ յառնել փակակային և զամենայն ջահք և զկանթեղ լուցանել...

էջ 322բ- Իսկ այլ արարողութիւն երեկոյի ժամուն սուրբ հարցն Թեղենեացն

էջ 325ա- Խրատք ժամատեղաց ըստ արևելեան սահմանացն, զոր խնդրեալն սուրբ վարդապետն Յակոբ Ղրիմեցին ի մեծ բարունեոյն Գրիգորէ Խլաթեցւոյ: Եւ կատարեաց այսպէս, որ դասի որ աւուր ձայն լինի այս է.

-Տէր եթէ զչրթունս զքեզ գոհանամք...

Հիշատակարան գրչի

(էջ 1ա) (...) սուրբ հոգի աստուած տառապալոյս տուր զօրութիւն ձեռի իմոյ և լուսաւորութիւն մտաց իմոց, ինձ գծողիս և վայելողի սորա. աղաչեմք:

Հիշատակարան գրչի

(էջ 4բ) զՄիքայել բանի սպասաւոր յիշել մաղթեմ ով ընթերցողք:

Հիշատակարան գրչի

(էջ 326ա) Գրեցաւ ցուցակ տօնից տէրունականաց և որդւոց հետևողացն Քրիստոսի, ընդ սմին և զաղօթամատոյցն (անընթ.) ի թվականութեանս Հայոց ՌՃԳ (1664) ամի ի սուրբ աթոռս էջմիածին, որ այսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս և ծաղկեցաւ ի հայրապետութեան տեառն Յակոբայ ՌՃԵ (1666) ամի ի քաղաքն...

Ձեռագիր Ms. Arm. f. 27

ԺԱՄԱԳԻՐՔ

թվական՝ XVII դար (?)

վայր՝ անհայտ

գրիչ՝ անհայտ

ստացող՝ անհայտ

նյութ՝ հասա և կոպիտ թուղթ

թերթաքանակ՝ 245

գրություն՝ անկանոն բոլորգիր, 15 տող, միասյուն, հիմնական շարադրանքը սև թանաքով, գլխագրերը և վերնագրերը՝ կարմիր:

մեծություն՝ 12.5 x 10.5x5 սմ.

գրի դաշտ՝ 6 x 9.5 սմ.

մանրանկար՝ էջ 2ա, վերանորոգված էջի վրա՝ կարմիր թանաքով մարդու ոտքերի ուրվագծեր: Ճակատազարդեր և լուսանցազարդեր ոչ առատ, կատարված միայն մուգ կարմիր թանաքով, երբեմն ճակատազարդերի համար թողնված են դատարկ տեղեր

կազմ՝ նորոգված, դրվագված կաշի՝ առջևում հավերժության նշանի, հետևում խաչի դրվագված պատկերներով, նոր կազմի վրա հին կազմի պահպանված մասերը փակցված:

աստառ՝ ծաղկազարդ կարմիր կտոր (պահպանված մասերը նորոգման ժամանակ օգտագործված)

հիշատակարան՝ գրչի էջ 39ա, 211ա

կնիք՝ Bodleian Library *սկզբի և վերջի էջերում, այնուհետև յուրաքանչյուր 30 էջը մեկ:*

Շատ էջերի լուսանցքներում հետագայում գրված քարոզների և աղոթքների մեկնություններ և ժամերգության համար հրահանգներ, փոքրիկ աղոթքներ և մաղթանքներ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

էջ 2ա- Քարոզ առաջաբան գիշերային պաշտամանց զկնի տէր եթէ չրթանցն...

էջ 39բ- Կարգաւորութիւն հասարակաց աղաւթից արևագալի ժամուն.

էջ 131բ- Կարգաւորութիւն հասարակաց աղաւթից երեկոյի ժամուն.

էջ 145բ- Կարգաւորութիւն հասարակաց աղաւթից խաղաղական ժամուն.

էջ 159բ- Նախադրութիւնք խրատական յաղագս աղօթիցն, զոր արարեալ է տեառն Ներսէսի եղբօր Գրիգորիսէ հայոց վարդապետի.

-Աղօթք հասարակաց քրիստոնէից մեծամեծաց և փոքունց...

էջ 173բ- Առաւոտ լուսոյ, արեգակն արդար...

էջ 184ա- Հաւատամ և խոստովանիմ զամենայն երրորդութեան...

էջ 201բ- Տէր Յիսուս Քրիստոս արձակեսցէ զքեզ յամենայն մեղաց քոց...

էջ 222ա- Խրատք արևագալին է

-Իսկ արևագալին եղիցի ...

էջ 230ա- Երեկոյին աղօթից խրատք

-յառաջ լուցանէ փակակալն զկանթեղսն...

էջ 233բ- Իսկ այլ արարողութիւն երեկոյի ժամուն ըստ սուրբ հարցն Թեղինեացն

էջ 238բ- Խրատք ժամատեղաց ըստ արևելեան սահմանացն սկսուածոց...

էջ 240ա-244ա- ցանկեր

Հիշատակարան գրչի

(էջ 39ա) Աղաչեմ զեղկելիս յիշել ի սուրբ աղօթս ձեր

Հիշատակարան գրչի

(էջ 211ա) Զմեղաւոր գրիչս յիշեցէք և աստուած զձեզ մինին հարիւրապատիկ, հազարապատիկ հատուսցէ և Քրիստոսի փառք յաւիտեանս ամէն:

Հիշատակարան հետագայի

(էջ 152ա-բ) Իւ օրինակն աստ աւարտի. այսինքն՝ չունի հանգստեան ժամը: Սակայն վերոյգրեալ աղաւթին գիտելով որ է հանգստեան ժամէն, ուստի հետևի. թէ կամ յԺԳ գարուն այսչափ միայն էր այն, և մնացեալքն յետոյ ուրեմն յօրինեալ են, և կամ ընդօրինակողն գրչագրիս այսչափ միայն է օրինակել: Սակայն վերջին ենթադրութիւնը անհաւանական թուի ինձ:

Հիշատակարան հետագայի

(առանձին ներդիրի վրա, կազմի ներսի կողմից)

Ex librin's

Frd. C. Conybeare. OXFORD

The Collection is masguin of Brevary is of the oldest San Lazaro Codex in Venece, written A.D. 1285, the Rituale Arnneniorum. P. 443

This codex is discribed in the /?/ book fully atp.443. It is any codex need any translation of the Breviary.

Թարգմ. (ծանոթագր. Ֆ. Կոնիբերի): Այս ժամագիրքն ընդօրինակված է հնագույն, 1285թ. գրված և Վենետիկում պահվող օրինակից (տե՛ս Rituale Armeniorum. էջ. 443):

Ձեռագիր Ms. Arm. d. 22

ԱՎԵՏԱՐԱՆ

թվական՝ XVI դարի վերջ

վայր՝ Վասպուրական

գրիչ՝ անհայտ

ծաղկող՝ Սարգիս Մեկացի (Մազման)

նյութ՝ թուղթ

թերթաքանակ՝ 267

գրություն՝ կանոնավոր բոլորգիր, 23 տող, երկսյուն, հիմնական շարադրանքը սև թանաքով, գլխագրերը՝ կարմիր:

մեծություն՝ 19 x 27 x 6.5 սմ.

գրի դաշտ՝ 12.5 x 18.5 սմ.

կազմ՝ դրվագված կաշի, դռնակով, մեջքի մասը վերանորոգված, առջևում դրվագված խաչ: Ներսի կողմում տախտակ:

աստառ՝ կարմիր և սպիտակ կետ-գծերով կտոր, դռնակի մասում կարմիր և սպիտակ բուսական նախշերով շագանակագույն կտոր:

պահպանակ՝ 2 էջ մագաղաթ՝ ձեռագրի սկզբում և վերջում, երկաթագիր Ավետարանից (երկսյուն) և մեկ էջ թղթյա պահպանակ սկզբում բոլորգիր երկսյուն Ավետարանից:

մանրանկար տերունական 14, ավետարանչի՝ 3

էջ 4տ- Աւետիք հրեշտակապետին առ կոյսն Մարիամ

էջ 4բ- Ծնունդ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի սուրբ յայրին

էջ 5ա- Քառասնօրեա գալուստ տեառն ի տաճարն

էջ 5բ- Մկրտութիւն տեառն Յիսուսի Քրիստոսի ի սուրբ Յորդանան

էջ 6ա- Պայծառակերպութիւն Քրիստոսի աստուծոյ մերոյ

էջ 6բ- Ոտնլուայն է

էջ 7ա- Խաչելութիւն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի Գողգոթէայ

էջ 7բ- Թաղումն

էջ 8ա- Աւերումն դժոխոց է և ազատումն հոգոցն

էջ 8բ- Յարութիւն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

էջ 9ա- Համբարձումն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յերկինս

էջ 9բ- գալուստ սուրբ հոգւոյն ի սուրբ վերնատունն

էջ 10ա- Եւ որդի ընդ ամպս երկնից եկեալ

էջ 10բ- Հին աւուրցն նստեալ յաթոռ քերովբէական

էջ 12ա- 16բ- Նկարազարդ խորաններով ցանկեր

էջ 18բ- խորան

էջ 89ա- Մարկոս ավետարանիչ, էջ 89բ- խորան

էջ 135ա- Ղուկաս ավետարանիչ, էջ 135բ- խորան

էջ 211ա- Յովհաննէս ավետարանիչ, էջ 211բ- խորան

Տարբեր բնույթի լուսանցազարդեր և զարդանկարված գլխագրեր բավական առատ:

հիշատակարան՝ ծաղկողի- էջ 12բ, 13բ

դատարկ էջեր՝ 11ա-բ, 17ա-բ 18ա

Ձեռագրի վերջից մի քանի էջ պակաս է, հավանաբար նաև հիմնական հիշատակարանը: Ձեռագիրը լավ վիճակում է, սակայն էջերը կեղտոտված են և սևացած:

Հիշատակարան ծաղկողի

(էջ 12բ) զծաղկող Սարգիս Մոկացին ի հետ յիշեա:

Հիշատակարան ծաղկողի

(էջ 13բ, չորս սյունանոց խորանով ցանկի ներքևում) Ով եղբայր ուղիղն այս է, որ Դ սիւնքն ի տեղս լինին, քան որ զաշխատելս տեսնիս զՄաղման ծաղկողս յիշեա առաջի Քրիստոսի, որ աստուած զքեզ յիշէ ջանում բարայ:

Ձեռագիր Ms. Arm. g. 11

Կարդինալ Բոննա

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ՅԵՐԿԻՆՍ

թվական՝ XVII-XVIII դդ.

վայր՝ Հռոմ (?)

թարգմանիչ՝ Վարդան Հունանեան

Նյութ թուղթ (տպագրական)

Թերթաքանակ՝ XXIV + 272 էջ (առանց ա.բ-ի)

Գրություն՝ մանր նոտրգիր, տողերի քանակն անկայուն՝ 16-21 տող, միասյուն, սև թանաքով, էջակալումը գրքային, յուրաքանչյուր էջի վերջում հաջորդ էջի առաջին բառը կրկնվում է: Գրքի վերնագիրը կրկնվում է բոլոր էջերի վերին մասում: Էջերը դրսի կողմից ոսկեզօծված են:

Մեծություն՝ 11.5 x 6.5 x 2 սմ.

Գրի դաշտ՝ 9 x 4.5 սմ.

Կազմ՝ կաշի, դրվագված ոսկեգույն մանր զարդանախշերով, կազմի գույնը՝ շագանակագույն (կազմը և էջերի ոսկեզօծումը, ինչպես նաև թերթերի գրքային ձևով կտրումը և կազմելու ձևը հիմք են տալիս ենթադրելու, որ ձեռագիրը կազմվել է տպարանում, գրքի ձևով):

Կնիք՝ Bibliotheca Bodleiana *էջ VI*

Կազմի վրա ներսի կողմից շրջանաձև թուղթ, վրան տպագրված է՝ Curae Sed Delicae (շրջանաձև) իսկ շրջանի կենտրոնում՝ Ex Bibliothec Raphaelis Macen Ate.

Ձեռագիր Ms. Arm. d. 24

Աբրահամ Կրետացի

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Թվական՝ հավանաբար XVIII դարի երկրորդ կես

Վայր՝ անհայտ

Նյութ՝ թուղթ

Թերթաքանակ՝ 51

Գրություն՝ կանոնավոր նոտրգիր, միասյուն, 21 տող, սև թանքով, վերնագրերը՝ կարմիր

Մեծություն՝ 17.5 x 21.5 x 1 սմ.

Գրի դաշտ՝ 13.5 x 14 սմ.

Կազմ՝ կաշի, միջուկը հաստ ստվարաթուղթ, ներսի կողմից սև նախշերով նարնջագույն թուղթ:

Կնիք՝ Bodleian Library, *առաջին և վերջին էջերի, ներդիր հիշատակարանի վրա:*

Հիշատակարան՝ հետագայի, պահպանակին փակցված էջի վրա:

Ձեռագրի վիճակը բավարար, վերջից նկատվում են պոկված էջերի հետքեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աբրահամ Կրետացու Պատմութիւնը լրիվ բացակայում է Պատմութեան վերջում հավելվածի կարգով այլ օրինակներում առկա «Կոնդակ Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ» փաստաթուղթը:

Հիշատակարան

(պահպանակ էջի վրա) Գրադարան Հայկ Աճեմյանի, ձեռագրաց բաժին, N 20, Թաւրիզ 28 մայիս

Պահպանակ էջի հակառակ կողմում փակցված սպիտակ թղթի վրա

«Ի գնահատություն այն լուրջ աշխատանքների, որ Օքսֆորդի Bodleian Library-ն տանում է ի սպաս հայկական մշակույթի ավանդների հավաքման, որը այնքան հին է, որքան ինքը՝ հայ ժողովուրդը, պրն. Դեյվիդ Բարետտի միջոցով սույն ձեռագիրը նվիրում եմ վերոհիշյալ հիմնարկությանն:

Դերիկ Աբրահամյան

1969, սեպտ. 21-ին, Թեհրան

Ձեռագիր Ms. Arm. f. 29

ԱՂՕԹԱԳԻՐՔ

Թվական՝ հավանաբար XVIII դարի երկրորդ կես

վայր անհայտ

նյութ թուղթ

քերթաքանակ՝ 27, գատարկ էջեր՝ 21-22

գրություն՝ անկանոն բոլորգիր, միասյուն, տողերն անկանոն՝ 20-25, սև թանաքով, վերնագրերը կարմիր

մեծություն՝ 10.5 x 16.5 x 1 սմ.

գրի դաշտ՝ 13.5 x 8 սմ.

կազմ՝ գրքային, սև գույնի կաշի, ոսկեգույն անկյունագծերով, անկյուններում դրվագված ոսկեգույն ծաղիկ:

պահպանակ՝ չագանակագույն ստվարաթուղթ

կնիք՝ Bibliotheca Bodleiana, առաջին և վերջին էջերի, նաև 25ա և 19բ էջերի վրա:

Վիճակը՝ լավ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

էջ 1ա- Աղօթք երանելոյն Պօնիքաղիոսի պապին ով ոք ասիցէ ի ժամանակի ձախորդութեան ազատի յամենից փորձութեանց.

էջ 2ա- Ով յաւիտենական աստուած.

-աւասիկ ես տարածեալ առաջի քո.

էջ 2բ- Եւ հաւատամ ով Յիսուս զի սա է մարմին քո սուրբ...

էջ 3ա- Տէր իմ Յիսուս ով ես դու և ով եմ ես.

էջ 3բ- Տէր իմ Յիսուս ոչ ունիմ զիր ինչս զի մատուցից զքեզ...

էջ 4ա- Ով տէր իմ Յիսուս ոչ ունիմ յոյս...

էջ 4բ- Արդ եղից և յանձնեցից ի վերայ աջոյ ձեռին քոյ...

էջ 4բ- Աղօթք սրբուն Թոմայի Աքւինացուն...

-Ամենակարող և մշտենջենական աստուած...

էջ 6ա- Աղօթք սուրբն Ամբրոսիոսի ասացեալ վասն եօթնենց յաւուր ասելիք.

-Մայրագունել քահանայ...

էջ 7ա- յաւուր երկուշաբթի.

-Թագաւոր կուսանաց սիրող ողջախոհութեան...

էջ 7բ- յաւուր երեքշաբթի.

-Ով կարասցէ արժանապէս հոչակել զայս...

էջ 8ա- յաւուր չորեքշաբթի.

-Զի ես տէր յիշելով զպատուելի չարչարանս քո...

էջ 8բ-յաւուր հինգշաբթի.
-Զի գու տէր ողորմիս ամենեցուն...
էջ 9ա- յուուր ուրբաթու.
-Նաև աղաչեմք զքեզ տէր սուրբ Հայր...
էջ 9բ- յաւուր շաբաթու.
-Նաև աղաչեմ զքեզ...
էջ 10բ- Այլ աղօթք նախքան զպատարագն.
-Այս սեղան ամենաքաղցր ուրախութեամբ քո...
էջ 11բ- Այլ իմն աղօթք նախքան զպատարագն.
-Հայր որ այնպէս սիրեցէր զաշխարհ...
էջ 12բ- Գրիգորիոս երեք ժ-երորդ փափն...
-Եւ կամեմ հռչակել զպատարագս և սրբազնագործել...
էջ 14ա- Աղօթք զկնի պատարագին.
-Հաճոյ եղիցի քեզ ով սուրբ երրորդութիւն...
էջ 15ա- Աղօթք աւուրին միածին ասելի զկնի պատարագին
-Երկրպագանեմ քեզ և գոհանամ զքէն...
էջ 16ա- Աղօթք սրբոյն Թոմայի առ Հայրն աստուած.
-Գոհանամ զքէն տէր սուրբ հայր ամենակարող...
էջ 16բ- Ջերմեռանդ աղօթք առ աստուած որդին ի սրբոյն Պոնուէն-թուրէ ասացեալ.
-Բևեռեա ամենաքաղցր Յիսուս զուղեղս և դաջիս հոգւոյ իմոյ...
էջ 17բ- Այլ աղօթք.
-Ամենասուրբ հոգի Քրիստոսի...
էջ 18ա- Կղէմէս ուիթերորդ պապն ասողաց զհետևեալ աղօթս.
-Շնորհեաց զներումն ամենից պակասութեանց...
էջ 18բ- Աղօթք Յովհաննու Ոսկեբերանի.
-Գոհանամ և մեծացուցանեմ և փառաւորեմ զքեզ...
էջ 19ա-20բ- Մանր աղօթքներ
էջ 23բ- Կերպ օրհնութեան ջրոյ
էջ 24ա- Երդմնեցութիւն ջրոյ
էջ 24ա- Աղօթք
-Տէր աստուած մեր, որ վասն փրկութեան ազգ մարդկան...
էջ 24բ- Աղօթք
-Աստուած անյաղթելի զօրութիւն և անխորհելի թագաւոր...
էջ 25բ- Աղօթք կատարեալ զղջման.
-Սիրեմ զքեզ գեր քան զամենայն...

Ձեռագիր Ms. Arm. d. 23

List of Armenian books and manuscripts in the hand of
Dr. Hyde, Bodley's librarian, 1665-1701
(Հայերեն գրքերի և ձեռագրերի ցուցակ գրված դոկտոր Հայդի կողմից, Բոդլեյան դրադարանի գրագարանավար, 1665-1701)

թվական՝ XVII դարի վերջ
վայր՝ Օքսֆորդ
նյութ՝ թուղթ
թերթաքանակ 4,
գրություն՝ սև թանաքով, ձեռագիր անգլերեն, ամբողջ էջի չափով, ձախ կողմից 2.5 սմ. լուսանցք:
մեծություն՝ 29.5 x 18 սմ.
կազմ և պահպանակ՝ ստվարաթուղթ (ուշ շրջանի)

Ցուցակը բաղկացած է 3 թերթից՝ գրված երկու կողմից:

Բաղկացած է երկու մասից. Manuscript Armenians, Imprints Armenians

Ձեռագրերի ցուցակն ընդգրկում է 92 ձեռագիր, տպագիր գրքերի ցուցակը՝ 52 գիրք:

Ձեռագրերը ցուցակում ներկայացված են խիստ համառոտ, հաճախ տրված են միայն վերնագրերը կամ հիմնական բովանդակությունը մեկ-երկու տողով: Նույն կերպ են ներկայացված նաև տպագիր գրքերը, երբեմն նշված են նաև հրատարակության թվականները:

АРМЯНСКИЕ РУКОПИСИ БИБЛИОТЕКИ БОДЛЕАН ОКСФОРДСКОГО УНИВЕРСИТЕТА

МГЕР ПАПЯН

Резюме

Каталог армянских рукописей, хранящихся в библиотеке Бодлеан Оксфордского университета вышел в свет в 1918 году. Авторы каталога С. Баронян и Ф. Конибер. В каталоге были описаны все армянские рукописи, которые в то время хранились в библиотеке. После 1918 года библиотека Бодлеан пополнила свои фонды, получив 13 армянских рукописей, в их числе Евангелия, иллюстрированные Акопом Джугаеци и Саргисом Мокаци (Мазман), История Абраама Кретаци, религиозные рукописи и список армянских рукописей и печатных книг библиотеки Бодлеан, составленный в конце XVII века библиотекарем доктором Гайдом. Эти рукописи ранее не были изучены и описаны. В настоящей публикации дано подробное описание армянских рукописей, поступивших в библиотеку после 1918 года.

ARMENIAN MANUSCRIPTS IN THE BODLEIAN LIBRARY OF OXFORD UNIVERSITY

MHER PAPYAN

Summary

The catalogue of Armenian manuscripts in the Bodleian library of Oxford University was published in 1918 by S. Baronyan and F. Conybare. In the catalogue there are descriptions of all Armenian manuscripts, which were stored in the library at the time. After 1918 Bodleian library has filled up its funds, by receiving 13 Armenian manuscripts, including Gospels illustrated by Hakob Jugaetsi and Sargis Mokatsi (Mazman), History of Abraham Kretatsi, religious books and a list of Armenian manuscripts and printed books of Bodleian library, prepared by the librarian Doctor Hyde at the end of XVII century. These manuscripts have not been investigated and described before. Detailed descriptions of Armenian manuscripts of the Bodleian library, received after 1918 are given in this publication.